ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

ՍՏԱԼ ՍԱՐԴԱՐՅԱՆ

Համազգային կարևոր նշանակություն ունեցող հարցերից մեկը, որը պահանջում է Հայրենիք – Սփյուռք ջանքերի մեկտեղում, Ղարաբաղյան հակամարտությունն է: 1980-ական թվականների վերջին սկիզբ առած Արցախյան շարժման և դրան հաջորդած պատերազմի տարիներին «Լեռնային Ղարաբաղի խնդիրը և դրանից բխող բարդությունները հեռանկարային կարևորության հարցեր էին ողջ Սփյուռքի համար, որն անկախ քաղաքական կողմնորոշումներից ու տարաձայնություններից՝ մեծ ուշադրությամբ հետևում էր տեղի ունեցող իրադարձություններին»[1]:

Արցախյան հարցում Սփյուռքի աջակցությունը Հայրենիքին նշանակալի է եղել ինչպես պատերազմի, այնպես էլ հետպատերազմյան շրջանում: Այն առ այսօր էլ շարունակում է հրատապ մնալ, քանի որ 1994 թ. մայիսի 12-ի հրադադարի մասին Հայաստանի և Ադրբեջանի համաձայնագրի ստորագրումից անցել է ավելի քան 20 տարի, սակայն խնդրի լուծումը ներկայումս հեռու է իրական լինելուց: Ավելին, գնալով ավելի է ուրվագծվում ռազմական գործողությունների վերսկսման վտանգը՝ կապված Ադրբեջանի սպառազինման ու ռազմատենչության հարաճուն մեծացման հետ: Ներկա փուլում Արցախյան հարցում Հայրենիք – Սփյուռք համագործակցության շարունակական զարգացման ու խորացման հրամայականը թելադրված է հայկական կողմի համար աննպաստ այնպիսի գործոններով, ինչպիսիք են Հայաստանի և Ադրբեջանի ռազմական բյուջեների միջև էական տարբերությունը, Հայաստանի ժողովրդագրական խնդիրները, Թուրքիայի գործունեությունը՝ որպես Ադրբեջանի դաշնակից, ադրբեջանական բանակի շարունակական սպառազինումը և այլն[2]:

Սփյուռքի ավանդը Արցախյան հիմնախնդրի հայանպաստ լուծման գործում հիմնականում դրսևորվել է երեք հարթության մեջ.

- *մասնակցություն Արցախյան պատերազմին,*
- *աջակցություն Արցախի անկախ պետականության կայացմանը,*
- *լոբբիստական գործունեության միջոցով միջազգային ասպարեզում սատարում արցախահայության դատին:*

---

[1] *Ք. Պետրոսյան. Հայրենիք – Սփյուռք հարաբերությունները 1988–2001 թթ., Երևան, 2011, էջ 43:*

[2] *Մանրամասն տե՛ս Ն. Հովհաննիսյան. Հայաստան – Սփյուռք ինտեգրման ռազմավարական ուղենիշները. հայեցակարգային մոտեցումներ. – «Աշխատանքային տետրեր» (ՀՀ – Սփյուռք երկխոսության ռազմավարության ուղենիշները), 2010, -1 և 2, էջ 68–70:*

Դեռևս Արցախյան շարժման ու դրան հաջորդած պատերազմի տարիներին Սփյուռքի մասնակցությունը համազգային այդ գործին դրսևորվեց սփյուռքահայերի աջակցությամբ ռազմական գործողություններին: Սփյուռքահայության ներկայացուցիչները եկան Հայաստան, զինվորագրվեցին արցախյան պայքարին, նրանց մի մասը իր կյանքը կամ առողջությունը զոհաբերեց Արցախի ազատագրության գործին: Հիշատակման արժանի է, հատկապես, ամերիկաբնակ Մոնթե Մելքոնյանի (Ավո) սխրանքը, որը, արտերկրում թողնելով իր բարեկեցիկ կյանքը և սիրած գործը՝ գիտությունը, որով զբաղվում էր 1970-ական թվականների վերջից, 1990 թ. զինվորագրվեց Արցախի ազատագրման գործին: Ունենալով ռազմական մեծ ջիղ և հրամանատարի հմուտ ունակություններ՝ նա կարողացավ վաստակել իր մարտական ընկերների սերն ու վստահությունը և շուտով դարձավ հրամանատար: Արցախի ազատագրման պայքարի ընթացքում Մոնթեն հերոսաբար զոհվեց մարտի դաշտում 1993 թ. հունիսի 12-ին: Արցախի ազատագրման համար ունեցած իր անգնահատելի ավանդի համար նա հետմահու պարգևատրվեց ՀՀ և ԼՂՀ պետական բարձրագույն պարգևներով՝ ՀՀ «Հայրենիք», ԼՂՀ «Ոսկե արծիվ», «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշաններով[3]: Նրան է պատկանում մեզանում արդեն կարգախոս դարձած հայտնի խոսքը. «Եթե կորցնենք Արցախը, կշրջենք մեր պատմության վերջին էջը»:

Մոնթեից բացի, բազմաթիվ այլ սփյուռքահայեր ևս իրենց ավանդն են ունեցել արցախյան գոյամարտում: Նրանցից նշանավոր է բեյրութահայ Վիգեն Զաքարյանը: Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներին նա մասնակցել է Բեյրութի հայկական թաղամասի պաշտպանությանը: 1992 թ. ապրիլին Վ. Զաքարյանը գալով Արցախ՝ զինվորագրվել է նրա ազատագրությանը: Մասնակցել է Շուշիի ազատագրման ռազմական գործողությանը (1992 թ. մայիսի 8), որի ընթացքում էլ զոհվել է հերոսի մահով: Վ. Զաքարյանը հետմահու պարգևատրվել է Արցախի «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով և «Արիության համար» մեդալով[4]:

Լիբանանահայերից կարելի է հիշատակել նաև Բեյրութի Չաթալբաշյանի ազգային վարժարանի ուսուցիչ Մհեր Ջուլհաճյանին, ով 1992 թ. զինվորագրվելով Արցախի ազատագրության գործին, 1993 թ. օգոստոսի 23-ին հերոսի մահով կնքեց իր մահկանացուն[5]:

Արցախում հերոսացած սփյուռքահայերից է հալեպահայ, Ֆրանկֆուրտի ճարտարագիտական համալսարանի մեխանիկամեքենաշինական ֆակուլտետի շրջանավարտ (1978 թ.) Կարապետ Քահքեջյանը: Նա նույնպես Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներին ընդգրկված է եղել Բեյրութի հայկական թաղամասի պաշտպանության գործում: 1991 թ. Կ. Քահքեջյանը մասնակցել է ՀՀ ԼՂՀ ինքնապաշտպանական ու ազատագրական կռիվներին, եղել

---

[3] *«Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988–1994» հանրագիտարան, Երևան, 2004, էջ 481:*

[4] *Նույն տեղում, էջ 196:*

[5] *Նույն տեղում, էջ 569:*

«Խաչակիրներ» ջոկատի հիմնադիր հրամանատարը: Զոհվել է 1993 թ. հունիսի 26-ին[6]:

Սփյուռքը իր մասնակցությունն է ցուցաբերել Արցախյան պատերազմին ոչ միայն հարազատ զավակներին ռազմաճակատ ուղարկելով, այլև զենքի ու զինամթերքի հայթայթմամբ և ռազմաճակատ հասցնելով:

Արցախյան պայքարին Սփյուռքի մասնակցության դրսևորումներից մեկն էլ այն հսկայական օգնությունն էր, որ Արցախին տրամադրվեց ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ հետպատերազմական շրջանում: Սոցիալ-բարեգործական տարատեսակ ծրագրերի միջոցով Արցախին ցուցաբերված և ցուցաբերվող այդ աջակցությունը մեծ նշանակություն ունի վերջինիս հոգսերը թեթևացնելու, նրա տնտեսական զարգացման և, հետևաբար, որպես անկախ պետություն կայացման տեսանկյունից: Ընդհանուր առմամբ, սոցիալ-տնտեսական ոլորտում Սփյուռքի աջակցությունը Արցախի անկախ պետականության կայացմանը դրսևորվել է բարեգործությունների և երկրամասի տնտեսության մեջ կատարված ներդրումների ձևով:

Բարեգործությունները Արցախում իրականացվել են ինչպես անհատական, այնպես էլ առանձին կազմակերպությունների մակարդակներով: Անհատական մակարդակով իրականացված բարեգործական ծրագրերն իրագործվել են Սփյուռքի առանձին բարերարների միջոցների հաշվին: Որպես օրինակ կարելի է վկայակոչել ռուսաստանաբնակ արցախահայ բարերար, մեծահարուստ Լևոն Հայրապետյանի բազմամյա բարեգործությունները՝ միտված Արցախում երիտասարդ ընտանիքների նյութական աջակցությանը: Արցախում բարեգործական ծրագրեր են կյանքի կոչում ամերիկահայ բարերարներ Հակոբ և Հիլդա Բաղդասարյանները, ովքեր 2013 թ. սեպտեմբերի 12-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հետ հանդիպման ժամանակ պատրաստակամություն հայտնեցին շարունակելու Արցախի զարգացմանը միտված բարեգործական ծրագրերը[7]: Հիշատակման արժանի մեկ այլ օրինակ է կրկին ռուսաստանցի բարերար Գրիգոր Գրիգորյանի օգնությունը Ստեփանակերտի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությանը 2013 թ. դեկտեմբերի 12-ին[8]: Իսկ 2014 թ. մայիսի 3-ին Արցախի Հանրապետության վարչապետ Արա Հարությունյանի հետ հանդիպման ժամանակ արգենտինահայ մի խումբ բարերարներ առաջարկել են Քարինտակ գյուղում կառուցել համայնքային կենտրոն և վերանորոգել մարզադպրոցը, ինչը ողջունվել է Արցախի կառավարության ղեկավարի կողմից[9]:

Կազմակերպական մակարդակով կատարված բարեգործական ծրագրերի հետևում կանգնած են Սփյուռքի բարեգործական կազմակերպությունները,

---

[6] *Նույն տեղում, էջ 659:*

[7] *Բակո Սահակյանը ողջունել է սփյուռքահայ բարերարների նվիրվածությունը http://www.times.am/?p=31999&l=am*

[8] *Բարեգործություն Ստեփանակերտի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությունում http://www.artsakhtv.am/am/news/show/5591*

[9] *ԼՂՀ վարչապետը հանդիպել է արգենտինահայ բարերարներին* http://zham.am/am/news/26785.html

որոնց թվում են՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, Հայ օգնության ֆոնդը, Հայ օգնության միությունը, «Թուֆենկյան» հիմնադրամը, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը[10] և այլն: Արցախում իրականացրած սոցիալ-բարեգործական ծրագրերով համահայկական ամենամեծ կառույցը, այնուամենայնիվ, «Հայաստան» համահայկական հիմնադրամն է, որն անուրանալի մեծ դեր է կատարել և մինչև օրս էլ շարունակում է կատարել արցախահայության սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու և երկրի տնտեսական, գիտակրթական, մշակութային զարգացումն ապահովելու համար[11]:

Բարեգործական այս բոլոր ծրագրերի գերնպատակը, անշուշտ, Արցախի վերաբնակեցումն է՝ հայ բնակչության մշտական ներկայության ապահովումը երկրամասում: Այդ պատճառով էլ այդ ծրագրերն ուղղված են արցախահայության սոցիալական վիճակի բարելավմանը և երկրամասի ենթակառուցվածքային համալիրի հետպատերազմյան վերականգնմանն ու զարգացմանը:

Արցախում առ այսօր Սփյուռքի կողմից իրականացված բարեգործական առաքելությունն ստացել է հետևյալ հիմնական դրսևորումները.

– օգնություն սոցիալապես անապահով խավերին, մասնավորապես՝ զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքներին,

– բնակարանաշինություն՝ անհատական տների ու բնակելի շենքերի շինարարություն և վերանորոգում,

– դպրոցների, մանկապարտեզների, գրադարանների, հիվանդանոցների, մշակութային հաստատությունների շինարարություն և վերանորոգում,

– դպրոցների համար դասագրքերի տպագրություն, հիվանդանոցների համար անհրաժեշտ բարձրորակ ժամանակակից սարքավորումների ձեռքբերում,

– աջակցություն շնորհալի պատանիներին ու երիտասարդներին կրթության, մշակույթի և այլ բնագավառներում,

– ենթակառուցվածքների շինարարություն՝ խմելու ջրի և ոռոգման ջրատարերի, էլեկտրահաղորդման ցանցերի, գազատարերի անցկացում:

Արցախում իրականացված ամենամասշտաբային ծրագրերը, այնուամենայնիվ, ավտոճանապարհաշինարարական խոշոր նախագծերն են, որոնց կենսագործումը վճռական նշանակություն է ունեցել Արցախի տնտեսության համար: Այդ նախագծերն իրականացվել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով: Ավտոճանապարհաշինարարական առաջին խոշոր ծրագիրը ՀՀ-ն Արցախի հետ կապող Գորիս – Ստեփանակերտ ավտոմայ-

---

[10] *Տե՛ս Ա. Վարդանյան. «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունեությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում.– Հայրենիք–Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991–2009 թթ.) Ստեփանակերտ, 2010, էջ 107–112:*

[11] *Արցախում Սփյուռքի բարեգործական կազմակերպությունների՝ իրականաց-ված ծրագրերի մասին մանրամասն տե՛ս Ա. Վարդանյանի հոդվածները «Հայրենիք – Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991–2009 թթ.)» ժողովածու (էջ 50–52, 83–84, 90–91, 94–112):*

րուղու կառուցումն էր 1995–1999 թվականներին[12]: Դրան հաջորդեց Արցախի ողնաշարը համարվող «Հյուսիս – հարավ» ավտոմայրուղու շինարարությունը 2000–2009 թվականներին[13]: Ներկայումս ընթացքի մեջ է ՀՀ-ն Արցախի հետ կապող երկրորդ մայրուղու՝ Վարդենիս – Մարտակերտ ավտոճանապարհի շինարարությունը: «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից 2014 թ. հեռուստամարաթոնի ընթացքում հանգանակված գումարը նախատեսվում է ուղղել այդ ավտոմայրուղու կառուցմանը:

Սփյուռքահայ գործարարների կողմից ներդրումային մի շարք ծրագրեր են իրականացվել Արցախի տնտեսության մեջ: Հիշատակելի է, օրինակ, լիբանանահայ գործարարների՝ 2011 թ. նախաձեռնած տնտեսական գործունեությունը Արցախի Քաշաթաղի շրջանում, որին արդեն միացել են սփյուռքահայ գործարարներ այլ երկրներից: Արցախում ներդրումներ կատարելու նպատակով լիբանանահայ գործարարները դեռևս 2009 թ. ստեղծել էին ԱՐԻ (Artsakh Roots Investment) կազմակերպությունը[14]: Տնտեսական այդ գործունեությունը հիմնականում նպաստում է Արցախում բնակարանաշինության և գյուղատնտեսության զարգացմանը: Նախաձեռնության նպատակն է Արցախում Սփյուռքի կողմից իրականացվող բարեգործական ծրագրերը համադրել տնտեսության զարգացմանը միտված ներդրումների հետ: 2014 թ. ԱՐԻ կազմակերպությունը նախաձեռնել է Քաշաթաղի շրջանի Աղավնի գյուղում բնակելի ավան կառուցելու ծրագիրը[15]:

Արցախին ռազմական և սոցիալ-տնտեսական աջակցություն ցուցաբերելուց բացի, Սփյուռքը կարևոր դեր ունի նաև միջազգային ասպարեզում արցախահայության դատին նպաստելու հարցում: Այս խնդրում գործողությունների գլխավոր ասպարեզը լոբբիստական գործունեությունն է: Վերջինիս հիմնական խնդիրներն են՝ Արցախի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման գործընթացին աջակցությունը, ադրբեջանական ռազմատենչության զսպումը (Ադրբեջանի կողմից պատերազմի սանձազերծման կանխումը), օտար երկրների ու միջազգային կառույցների կողմից Արցախին մարդասիրական ու այլ կարգի օգնության հատկացումն ու դրա չափերի մեծացումը, ինչպես նաև Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից ՀՀ և ԼՂՀ ապաշրջափակումը:

Սփյուռքի հայկական լոբբիստական կառույցների մեջ ամենախոշորն Ամերիկայի հայ ազգային կոմիտեն է (հայտնի է նաև ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախումբ անվամբ), որը գրասենյակներ ունի նաև աշխարհի հայաշատ այլ երկրներում: Նշանավոր է նաև Ամերիկայի հայկական համագումարը: Եվրոպայում լոբբիստական գործունեություն են ծավալում Արդարության և ժողովրդավարության եվրո-հայկական միությունը, Եվրոպայի հայկական միությունների ֆորումը, Ֆրանսիայի Հայկական հարցի պաշտպանության կոմիտեն, Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը և

---

[12] http://www.himnadram.org/index.php?id=22418&lang=2

[13] http://www.himnadram.org/index.php?id=23112&lang=2

[14] *Տե՛ս* http://ariroots.com/

[15] *Լիբանանահայ գործարարները Քաշաթաղ շրջանի Աղավնի գյուղում ավան կկառուցեն http://hayernaysor.am/լիբանանահայ-գործարարները-քաշաթաղ-շր/*

այլն[16]: Իր գործունեության մեջ որոշակիորեն լոբբիստական կառույցի տարրեր է պարունակում նաև Ռուսաստանի հայերի միությունը, որը հավակնություն ունի ի թիվս այլ հարցերի պաշտպանել Հայաստանի շահերն Արցախյան հարցում[17]:

Արցախի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման գործին սատար կանգնելու հարցում Սփյուռքի ջանքերը գլխավորապես ուղղված են աշխարհի տարբեր երկրներում, ինչպես նաև միջազգային կազմակերպություններում արցախահայության ինքնորոշման իրավունքի իրականացման՝ հայության համար ընդունելի ձևերի (Արցախի անկախություն, միավորում ՀՀ-ի - հետ) ճանաչմանը: Քանի որ ներկայումս Ղարաբաղյան խնդրում հայկական կողմի որդեգրած քաղաքականությունը միտված է Արցախի անկախության ճանաչմանը, ապա Սփյուռքն էլ, ըստ այդմ, սատար կանգնելով հայրենի պետության վարած արտաքին քաղաքականությանը, ձգտում է հնարավոր բոլոր միջոցներով (քարոզչական, քաղաքական և այլն) նպաստել Արցախի անկախության միջազգային ճանաչմանը:

Չնայած Սփյուռքը (և, ընդհանրապես, հայությունը) դեռևս չի հասել որևէ երկրի կողմից Արցախի անկախության ճանաչմանը, սակայն այդ ճանապարհին գրանցվել են նշանակալի արդյունքներ: Խոսքը վերաբերում է համապետականից ցածր մակարդակներով՝ նահանգային, մարզային, քաղաքային և այլն, Արցախի անկախության ճանաչմանը, ինչը վերջին շրջանում դարձել է միտում Սփյուռքի կողմից իրականացվող քաղաքականության մեջ[18]: Այս հարցում ամենակարևոր ձեռքբերումն այն է, որ արդեն ԱՄՆ 5 նահանգներ (Ռոդ Այլենդ, Մասաչուսեթս, Մեն, Լուիզիանա, Կալիֆորնիա) ճանաչել են Արցախի անկախությունը (Կալիֆորնիա նահանգը Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչել է 2014 թ.)[19]:

Արցախի անկախության ճանաչումը համապետականից ավելի ցածր մակարդակներով զուտ իրավաբանական կամ ֆորմալ առումով մեծ բան չի նշանակում: Այսինքն՝ որևէ նահանգի կողմից Արցախի անկախության ճանաչումը չի նշանակում տվյալ պետության կողմից դրա ընդունում: Ավելին, եթե անգամ, օրինակ, ԱՄՆ-ի բոլոր նահանգներն էլ ճանաչեն Արցախի անկախությունը, միևնույն է, դա չի նշանակում ԱՄՆ-ի կողմից դրա ընդունում:

Այնուամենայնիվ, միջազգային ասպարեզում համապետականից ցածր մակարդակներով Արցախի անկախության ճանաչումը հայության համար ունի ոչ միայն խորհրդանշական, այլև գործնական ու առարկայական նշանակություն: Նախ՝ նահանագային, քաղաքային և այլ մակարդակներով Արցախի անկախության ճանաչումը կարևոր է խնդրի շուրջ հասարակական կարծիքի

---

[16] К. Ходжаян. Роль и значение Европейского Парламента в деятельности армянских организаций Диаспоры.– «21-й век» (Ереван), 2014, № 1, с. 71 – 72.

[17] В. Дятлов, Э. Мелконян. Армянская диаспора: очерки социокультурной типологии. Ереван, 2009, с. 129.

[18] *Տե՛ս, օրինակ, Վ. Հովյան. Սփյուռքի դերակատարումը Հայաստանի համար. – «Գլոբուս», (Երևան), -6, 2014, էջ 58:*

[19] *Կալիֆորնիայի Սենատը ճանաչել է Արցախի անկախությունը* http://www.panarmenian.net/arm/news/181958/

ձևավորման տեսանկյունից: Այլ կերպ ասած՝ դա կարող է ունենալ քարոզչական ազդեցություն՝ Արցախյան հարցում միջազգայնորեն հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորման առումով: Բացի այդ, համապետականից ցածր մակարդակներով Արցախի անկախության ճանաչումն ու նրա հետ շփումների հաստատումը կարևոր դեր ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար՝ միջազգային ասպարեզ դուրս գալու և այդ կապերն ընդլայնելու, խորացնելու ու ամրապնդելու տեսանկյունից: Իսկ դա չի կարող չբարձրացնել դեռևս չճանաչված ԼՂՀ-ի միջազգային հեղինակությունը, չնպաստել նրա տնտեսական, սոցիալ-մշակութային, գիտակրթական զարգացմանը: Այս ամենը հիմք է հանդիսանում Արցախի անկախ պետականության ամրապնդման ու կայացման համար:

Ասվածն ամենևին չի նշանակում, որ Սփյուռքն անտեսում է համապետական մակարդակով Արցախի անկախության ճանաչումը: Պարզապես դրան զուգահեռ Սփյուռքը վարում է համապետականից ցածր մակարդակներով Արցախի անկախության ճանաչմանը միտված քաղաքականություն՝ համապետական մակարդակով այդ խնդրի լուծումը թողնելով ավելի բարենպաստ ժամանակի համար: Այս հարցում Սփյուռքը ուղղակի ցուցաբերում է պրագմատիկ մոտեցում:

Ադրբեջանական ռազմատենչության զսպման առումով Սփյուռքի գործողություններն ուղղված են ՀՀ և ԼՂՀ դեմ Ադրբեջանի ռազմաշունչ հռետորաբանությանն ու ոտնձգություններին հակազդելուն: Այս հարցում Սփյուռքը, բացի իր քարոզչական լծակներից, օգտագործում է նաև քաղաքական լծակները՝ փորձելով ազդել տարբեր երկրներում խնդրի հետ առնչվող որոշումների ընդունման վրա: Այլ կերպ ասած՝ Սփյուռքը, բացի արտերկրում հասարակական կարծիքի ձևավորման վրա ազդելուց, աշխատում է անմիջականորեն ներգործել նաև քաղաքական գործընթացների վրա: Դա կատարվում է երկու ճանապարհով:

Առաջինը *արտերկրի պետական-քաղաքական գործիչների ու քաղաքական ինստիտուտների կողմից ադրբեջանական ռազմաշունչ հռետորաբանությանը, ՀՀ ու ԼՂՀ դեմ ռազմական ոտնձգություններին տրված գնահատականներն են, որոնք կարող են զսպիչ ազդեցություն ունենալ Ադրբեջանի համար: Այսպես, 2014 թ. հուլիս–օգոստոս ամիսներին, երբ հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակը բավական սրվել էր, ինչը կարող էր վերածվել ռազմական լայնամասշտաբ գործողությունների, ԱՄՆ հայկական լոբբիի ջանքերով խստացվեցին ամերիկյան վարչակազմի հայտարարությունները ստեղծված իրավիճակի առնչությամբ՝ ի վնաս Ադրբեջանի: Սկզբնական շրջանի ամերիկյան հայտարարությունները, որոնցում հավասարության նշան էր դրվում հայկական և ադրբեջանական կողմերի միջև ու երկու կողմերին էլ կոչ էր արվում զերծ մնալ հրադադարի ռեժիմը խախտող քայլերից, ԱՄՆ հայկական լոբբիի քննադատության արդյունքում փոխարինվեցին Ադրբեջանին տրվող ավելի խիստ գնահատականներով:*

Երկրորդը *Ադրբեջանի սպառազինման, նրա ռազմական հզորության մեծացմանը խոչընդոտելն է: Այս ասպարեզում Սփյուռքը պայքարում է տարբեր երկրներում այնպիսի օրենքների և այլ իրավական ակտերի ընդունման համար, որոնք արգելում են Ադրբեջանին զենքի վաճառքը կամ ռազմական օգ-*

նության տրամադրումը: Այս առումով նշանակալի էր, օրինակ, 1992 թ. հայկական լոբբիի ջանքերով ԱՄՆ Կոնգրեսի ընդունած Ազատության աջակցության ակտի թիվ 907 բանաձևը, որն արգելում էր ամերիկյան վարչակարգին ռազմական և այլ տեսակի օգնություն ցուցաբերել Ադրբեջանին, քանի դեռ վերջինս չէր վերացրել ՀՀ և ԼՂՀ շրջափակումը: Ճիշտ է, այս բանաձևը հետագայում՝ 2001 թ., կասեցվեց ԱՄՆ գործադիր իշխանության ճնշման ներքո, սակայն պատերազմի տարիներին՝ 1992–1994 թթ., այն որոշակի դեր է խաղացել հայկական կողմի ռազմական հաջողության ապահովման տեսանկյունից: Թիվ 907 բանաձևի գործադրման արդյունքում «Ադրբեջանը համարվում էր նախկին Խորհրդային Միության միակ երկիրը, որին իրավասություն չէր տրվում Ազատության աջակցության ակտի համաձայն ստանալ Միացյալ Նահանգների կառավարության ֆինանսական աջակցությունը»[20]: 1990-ական թվականներին, երբ ԱՄՆ-ն ձգտում էր ներթափանցել հետխորհրդային տարածք և խիստ շահագրգիռ էր կասպյան էներգակիրների հարցում, հայկական լոբբիի ջանքերի արդյունքում թիվ 907 բանաձևի ընդունումը դիտվում էր լուրջ հաղթանակ և էթնիկական լոբբինգի հաջողության վառ օրինակ[21]:

Լոբբիստական գործունեության հաջորդ կարևոր խնդիրը օտար երկրների ու միջազգային կառույցների կողմից Արցախին մարդասիրական և այլ կարգի օգնության հատկացման ու դրա չափերի մեծացման համար պայքարն է: Այս հարցում ևս կան որոշակի հաջողություններ: Մասնավորապես, ամերիկահայերի ջանքերով ԱՄՆ-ն ամեն տարի իր պետական բյուջեի առանձին տողով օգնություն է հատկացնում Արցախին: Եղել են տարիներ, երբ ՀՀ-ն ԼՂՀ-ի հետ աշխարհում առաջին տեղերում է եղել ԱՄՆ-ից ստացած օգնության չափով: Այսպես, 1997 թ. ԱՄՆ-ի ՀՀ-ին հատկացրած 87,5 մլն դոլարից բացի ԼՂՀ-ին հատկացրել է 12,5 մլն դոլարի օգնություն[22]: Սակայն հարկ է ասել, որ սովորաբար ԱՄՆ-ի կողմից Արցախին հատկացվող ֆինանսական ամենամյա օգնությունը տատանվում է 5–10 մլն դոլարի սահմաններում: Ի դեպ, ԱՄՆ-ն - միակ երկիրն է, որից Լեռնային Ղարաբաղը ստանում է ֆինանսական աջակցություն[23]:

Նկատենք, որ ԱՄՆ-ի կողմից Արցախին տրամադրվող ֆինանսական օգնությունը չունի զուտ մարդասիրական նշանակություն և չի լուծում միայն նյութական, այն է՝ պատերազմի ու շրջափակման մեջ հայտնված Արցախի կարիքները թեկուզ մասնակիորեն բավարարելու, նրա հոգսերը թեթևացնելու խնդիր: Այն մեծապես ունի նաև քաղաքական նշանակություն. ԱՄՆ-ի պետական բյուջեի առանձին տողով Արցախին հատկացվող օգնությունը են-

---

[20] *Կ. Վերանյան, Հ. Նահապետյան, Ա. Սիմավորյան, Տ. Ղանալանյան. Հայ համայնքն ԱՄՆ-ում, Երևան, 2010, էջ 121:*

[21] *Ժ. Զարիֆյան. Ամերիկահայկական լոբբին. կառուցվածքը, մեթոդները և արդյունքները.– «Աշխատանքային տետրեր» (ՀՀ – Սփյուռք երկխոսության ռազմավարության ուղենիշները), 2010, - 1 և 2, էջ 174:*

[22] *«Ազգ», 3. VII. 1998:*

[23] *Ա. Եգանյան. Հայաստանի Հանրապետության և ամերիկահայ լոբբինգային կառույցների համագործակցության ռազմավարական գնահատումներ.– «Աշխատանքային տետրեր» (ՀՀ – Սփյուռք երկխոսության ռազմավարության ուղենիշները), 2010, -1 և 2, էջ 115:*

թադրում է, որ այդ երկիրը դրանով ինչ-որ տեղ ճանաչում է Արցախի ինքնորոշման իրավունքը, համենայն դեպս ԼՂՀ-ն դիտում է որպես Ադրբեջանի ինքնիշխանությունից դուրս գտնվող պետական կազմավորում և միջազգային հարաբերությունների ու միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ:

Արցախյան հակամարտության կարևոր բաղադրիչներից մեկն էլ Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից ՀՀ և ԼՂՀ շրջափակումն է՝ վերջիններիս տնտեսապես թուլացնելու, ծնկի բերելու հույսով: Հետևաբար, այս առնչությամբ Հայրենիք – Սփյուռք համագործակցության կարևոր բնագավառ է հայկական զույգ հանրապետությունների ապաշրջափակման համար մղվող պայքարը: Դա տարվում է ինչպես առանձին պետություններում, այնպես էլ միջազգային կազմակերպություններում: Հայկական լոբբին վերջիններից հիմնականում պահանջում է Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերություններում բարձրացնել Հայաստանի ապաշրջափակման հարցը. այսպես, օրինակ, Թուրքիային կամ Ադրբեջանին ինչ-որ զիջումներ անելիս, նրանց համար որոշ դրական քայլեր կատարելիս որպես նախապայման դնել ՀՀ-ի և ԼՂՀ-ի ապաշրջափակումը: Սփյուռքի կողմից այս պահանջը կատարվում է ոչ միայն քաղաքական, այլև իրավական, այն է՝ օրենսդրական մակարդակով: Այս հարցում էլ կան որոշակի արդյունքներ: Այսպես, ԱՄՆ հայկական լոբբիի ջանքերով 1995 թ. հունիսի 29-ին Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատն ընդունեց Մարդասիրական օգնության միջանցքի ակտը, որով արգելվում էր Միացյալ Նահանգների կողմից աջակցությունն այն երկրներին, որոնք խոչընդոտում են ԱՄՆ մարդասիրական օգնության մատակարարումներն այլ երկրներին: Այս ակտը կարևոր ձեռքբերում էր ՀՀ և ԼՂՀ ապաշրջափակման համար պայքարի համատեքստում[24]: Բացի այդ, ամերիկահայ լոբբին կարողացել է կասեցնել 2002–2005 թթ. կառուցված Հայաստանը շրջանցող Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի շինարարության ֆինանսավորումը ԱՄՆ-ի կողմից, ինչպես նաև, համագործակցելով հատկապես հունական լոբբիի հետ, նվազեցնել Թուրքիային ցուցաբերվող ռազմական օժանդակությունը[25]:

ՀՀ և ԼՂՀ ապաշրջափակման համար պայքարի համատեքստում հատկանշական է նաև Եվրոպայի հայկական լոբբիստական կառույցների ակտիվությունը, որի արդյունքում խնդրո առարկա հարցը դարձել է օրակարգային ԵՄ – Թուրքիա հարաբերություններում[26]:

Այսպիսով, Սփյուռքն իր գործուն մասնակցությունն է ունեցել ինչպես արցախյան պատերազմում հաղթանակի կերտման, այնպես էլ հետպատերազմյան շրջանում ԼՂՀ-ի զարգացման ու կայացման գործում: Քանի դեռ վերջնականապես լուծված չէ Արցախյան հակամարտությունը, Հայրենիք – Սփյուռք համագործակցությունը այս հարցում շարունակում է հրամայական մնալ:

---

[24] *Կ. Վերանյան, Հ. Նահապետյան, Ա. Սիմավորյան, Տ. Ղանալանյան. նշվ. աշխ., էջ 121:*

[25] *Ա. Քոչիկյան. Հայկական լոբբինգային խմբերի ծագումն ու զարգացումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում. քննական ակնարկ.– «Աշխատանքային տետրեր» (ՀՀ – Սփյուռք երկխոսության ռազմավարության ուղենիշները), 2010, -1 և 2, էջ 206–207:*

[26] *Տե՛ս* К. Ходжаян. *նշվ. աշխ., էջ 79–80:*

РОЛЬ ДИАСПОРЫ В АРЦАХСКОМ ВОПРОСЕ

СТАЛ САРДАРЯН

Р е з ю м е

С самого начала Арцахского движения (1988–1994 гг.) армянская Диаспора участвовала в этой борьбе, имеющей важное общенациональное значение. Ее участие проявилось в трех сферах – военной, социально-экономической и лоббистской. В военной сфере Диаспора способствовала арцахской борьбе участием в боевых действиях, а также приобретением и доставкой на фронт оружия и боеприпасов. В социально-экономической сфере Диаспора на индивидуальном уровне и на уровне разных организаций осуществляла множество проектов, направленных на улучшение социального положения и экономического развития Арцаха; есть также факты инвестиций в экономику Арцаха бизнесменами Диаспоры. В сфере лоббистской деятельности Диаспора способствовала процессу признания независимости Арцаха на уровне, ниже общегосударственного, обузданию милитаризма Азербайджана, приложила немало усилий в вопросе содействия Арцаху другими странами, а также устранения блокады РА и Арцаха со стороны Азербайджана и Турции. Пока окончательно не разрешен арцахский конфликт, развитие и углубление сотрудничества Родина – Диаспора в этом вопросе остается императивом.

THE ROLE OF THE DIASPORA IN THE ARTSAKH ISSUE

STAL SARDARYAN

S u m m a r y

Since the beginning of the Artsakh movement (1988–1994) the Diaspora has participated in that struggle having great nationwide importance. The participation of the Diaspora in the Artsakh struggle has been manifested in three spheres: military, social-economic and lobby. In military sphere the Diaspora promoted the Artsakh struggle by participating in battles and providing the front with certain arms and ammunition. In social-economic sphere the Diaspora on individual and different organizational levels has implemented lots of programs aimed at the improvement of social conditions and the economic development of Artsakh. There are also facts of investments into the Artsakh economy by the businessmen of the Diaspora. In the

sphere of lobby the Diaspora has promoted the process of international recognition of the independence of Artsakh, the restriction of the militarism of Azerbaijan, has struggled for aid to Artsakh by other countries, as well as elimination of blockade of RA and NKR. Until the Artsakh conflict is not resolved finally, the development and deepening of Homeland – the Diaspora cooperation in that issue continues to stay as imperative.